ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 49-րդ հոդվածի «գ» կետով և 59-րդ հոդվածով՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) ընտրության հարցը քննարկել Կանոնակարգի 55-րդ և 97-րդ հոդվածներով սահմանված կարգով հետևյալ տարբերությամբ.

1) մինչև 15 րոպե տևողությամբ ելույթով հանդես է գալիս Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացուցիչը՝ ներկայացնելով Պաշտպանի պաշտոնում ընտրվելու համար Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը.

2) մինչև 30 րոպե տևողությամբ ելույթով հանդես է գալիս Պաշտպանի թեկնածուն, որին կարող են սահմանված կարգով տրվել հարցեր.

3) մինչև 15 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով կարող է հանդես գալ Հանձնաժողովի ներկայացուցիչը.

4) մինչև 20 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով կարող է հանդես գալ Պաշտպանի թեկնածուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆ

22 փետրվարի 2016 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 587 - Լ